

ՎԱՏԱՆՈՐՈՒԹՅՈՒՆ

Պաշտարանի համար	12
Տարեկան	6
Վեցամսյա	15
Մրտաւանձակի համար տարեկան	8

Անկերիայի համար	3
Տարեկան	1.50
Վեցամսեայ	8

Մանուցման տարւոյն սուսին երեւիսն համար 40 ս. իսկ վերջին երեւիսն համար 20 սանրիսն հ. երեւիսն անկերիայի համար 20 0/0 գեղջ կըլ ըստ 1/2 անուսի համար մ'ոսի 40 սանրիս

ՇԱՐՇՈՒՄ

ՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆՈՒՄԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐ ՏՐՈՒՄԻՆԻ ՉՈՐԵՔԻՆՎԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՇՈՒՄ ՕՐԵՐԸ

Նամակ եր դրամ դ. կիչ հիւրագրութեան հասցիին

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjoum“ Varna (Bulgarie)

Արտասանակի համար մեքէ (20 ՍԱՆԹԻՄ) (Պաշտարանի համար մեքէ (15 ՍԱՆԹԻՄ) (

Դրոսիւնիս ևս չեն տրուիր

ՇԱՐՇՈՒՄԻ ԲԱՏԱՆՈՐԿ ԳՐԱԲՈՂԸ ԲԱՏՆԵԳԻՆԸ ՊԷՏՐ ԵՒ ԿԱՆԵՍԻՎ ՎՃԱՐԷ

ԽՐԱԿՐՈՒԹՅՈՒՆ

Սեր բաժանորդներուն կը յիշեցնենք որ ներկայ փետրվար 1-ին քաջաւ շարժումն ընդ բաժանորդագրական տարեշրջանը եւ կը խնդրենք անոնցմէ որ փութացնեն բաժանորդներու վճարումը:

ԱՄԵՐԻԿԱՅԻ մեր բաժանորդները պէտք է դրամները ուղղակի մեզ ուղարկեն:

Դիւրութեան համար անոնք կարող են վառնալի Ազգ. պանթայնի գանձարի 15 Քր. (3 տոլ.) շէքեր ուղարկել:

ՊԱՐՍՅԱՍՏԱՆԻ բաժանորդները զիւրութեան համար կարող են ուսական թղթադրամ զրկել ապահովագրութեան նամակներու մէջ: Ռուսական փողի հաշուով 6 րուպլի է Շարժումի տարեկան բաժանորդը:

Ստիպուած ենք նորէն կրկնել որ Շարժումի բաժանորդագրութիւնը կանխիկ է եւ իր հասցէին հետ բաժանորդին ալ չը զրկողներու դիմումները անհետեւանք կը մնան:

Քէօնթէնճէի մեր գործակալն է Պ. Գրիգոր Կարապետեան:

Այդ տեղի մեր բաժանորդներէն կը խնդրուի իրենց հաշիւը վճարել նոյն պարոնին:

ՅԵՂԱՓՈՒՍՈՒԹԻՒՆԸ ՌՈՒՍԻՈՅ ՄԷՋ

Գ.

Պարարտ հողը, որու վրայ ինկան յեղափոխական պրոպագանդի սեղմերը, ուսմացաւ և բարաւ մեծ արդիւնք: Ռուս յեղափոխական պրոպագանդիստները 60ական թուականներէ ի վեր սկսան տենդոտ ու յամառ գործունէութիւն՝ արհամարհելով ամէն վտանգ. պատրաստ համբերութեամբ տանելու Սիպերիոյ տաճանակիր աշխատանքը. եւ րոպական համալսարանները աւարտող ուսանողներ, ուսանողներէն սիրով կերթալին ուսական դասաւանդներու ամէն մասնակցին. կը գտնէին ուսական զիւղերու ամենէն հեռաւորը հոն իբրեւ բժիշկ, իբրեւ ուսուցիչ, իբրեւ զիւղատնտես պարապելով

կը կազմէին յայտնի ու գաղտնի լսարաններ, տպարաններ ևն տղէտ ժողովուրդը լուսաւորելու անոր ազատութեան գաղափարը տալու և զայն յեղափոխութեան մշակու համար: Իրենց գաղափարական այս գործին զոհ ինկող հազարաւոր երիտասարդ ուսմարու շքացումը չը վնասեցուց նորերը, որոնք զոհուողներու և Սիպերիա քաղաքումներու պարապ ձգած շարքերը լեցնելով յառաջ տարին սկսուած գործը: Ինչպէս որ ուս. թրքական պատերազմէն յետոյ յեղափոխականները կը ներկայացնէին ոյժ, որը անոնք փաստոր կերպով ցոյց տուին սպաննելով Յարը:

Այսօր շարժումը ստացած է արդէն մեծ ծաւալ. այժմ կը գործեն արդէն բազմաթիւ յեղ. կուսակցութիւններ, որոնցմէ իւրաքանչիւրը ունի իր մասնաւոր ձրապիւրը և տակտիկան և իր պաշտօնական օականը եւ րոպական կեդրոն քաղաքներու մէջ: Այս կուսակցութեանց մէջ զօրաւորագոյնն է Ռուսաստանի Սոցիալ Դեմոկրատիան, որ վերջերս ունեցաւ իր երկրորդ ընդհանուր ժողովը:

Ինչպէս որոսերը իրենք ի հարկէ դժգոհելու ու յեղափոխելու աւելի մեծ պատճառներ ունէին Ռուսաստանէն նուսճուած և Յարի լուծին դառնութիւնը ճաշակած բոլոր ժողովուրդները: Լեհերը Կոստանտնուպոլի հերոսական ապստամբութենէն ետքը երբէք չը թուլացան և անկէ ի վեր կը պատրաստուին մինչեւ այսօր: Ասոնք իրենց քաղաքակրթութեամբ անհամեմատ աւելի բարձր քան ուսերը՝ կարողացան ստեղծել հակակառավարական ուժեղ հոսանք մը և զիմադրելով ուսական ոտնձգութեանց պահեցին իրենց ազգ. ինքնուրոյնութիւնը: Լեհաստանը ուսացնելու համար հոն զրկուող ուսասոյց մը անգամ մը բացազանջած է, «ա՛խ այս լեհ մայրերը, ատոնք կը քանդեն ուսացման մեր բոլոր ձրագիրները» և

Լեհերը այսօր ունին յեղ. ուժեղ կազմակերպութիւն մը: Լեհերէն ետքը կուգան ուրիշ ազգեր նոյնպէս կազմակերպուած ոյժերով: Հրէաները Ռուսաստանի ամենէն շատ հալածուող և իրաւազուրկ տարրը ունին իրենց «Իւսուցում», որ կը ներկայացնէ ուժեղ կազմակերպութիւն մը և ցոյց տուած է արդիւնաւոր գործունէութիւն: Այսպէս յեղ. տեսակետով կազմակերպուած են և փոքր-ուսերը, ֆինլանտացիները, հայերը, վրացիները և Ռուսաստանի այլացեղ բոլոր ժողովուրդները:

Ռուսահայաստանի ու շաղրութիւնը դարձած ըլլալով ճսճկահայաստանի յեղ. շարժման վրայ և ուժերը այստեղ զբաղուած՝ համեմատաբար հոն ուշ սկսաւ զուտ հայկ. յեղ. կազմակերպութիւնը: Միայն վերջի տարիներս կազմուեցան սօցիալիստական խումբեր, որոնք քանի մը տարիէ ի վեր ունին նաև իրենց օրգանը «Պրոլետարիատ» անունով:

Բայց բանապետութիւնները միշտ կոյր են եղեր: Հայկ. դպրոցներու փակումը, եկեղեցական կայրածներու բռնի զլաւումը հայ ժողովուրդն ալ դուրս բերին Յարի դէմ բացալստ կռուի և ստիպեցին, որ հայերն ալ ունենան սխալեմաթիկ կերպով կրօնաւոր միջոցներ: Եւ ունա կազմուեցան հայկ. «Ինքնապաշտպանութեան կոմիտէները»:

Այս համառօտ տ'սութենէ ետք յաջորդիւ կը քննենք, թէ ինչ զիրք բռնած են ուս. յեղափոխական մարմինները գէպի հղատակ ժողովուրդները, անոնց յեղափոխական կազմակերպութիւնները և թէ ինչ գիրք պէտք է բռնեն հայերը գէպի ուս. յեղափոխականները:

Մարգարէտնի

ԶՈՒՐ ՃԻԳԵՐ

(Շար. նախորդ թիւէն եւ վերջ)

Յեղեղուկ ամբիւր սկսաւ միութիւն պրոպ. Դաշնակցական ձևուհաս մարմինները ժամանակ վառնեցին, զոհուութիւն ըրին. իսկպէս միութիւն կամ գոնէ համբարշխ պորձակցութիւն մը առաջ բերելու համար. իսկ յետոյ արդէն մենք տեսանք որ միութիւն պրոպագանդա արգելք հանդիսացան միութեան իրականացման պահանջուած էն անհրաժեշտ խոչնդոտներ չի վերցնելով մէջտեղէն եւ չի զաղրեցնելով նոյնպէս իրենց պաշտօնական թերթերու անամօթ յարձակումները գէպի յեղափոխական գաղափարը եւ գէպի այն կազմակերպութիւնը, որուն հետ իբր թէ կը բաղձան միանալ. իսկ այս պարագային մեզ պարզ էր որ Դաշնակցութիւնը կապակածով պիտի վերաբերուէր գէպի այդ կուսակցութիւնը եւ զգուշաւոր դիրք պիտի բռնէր. իսկ ապուշ ամբիւր տեսնելով այս բոլորը նորէն միութիւն, միութիւն կազմակցութիւնը Դաշնակցութիւնը ի հարկէ չչեղեցաւ. միութեան իրականութեան իր մասին ունեցած որոշ, գիտակից եւ հաստատ համոզում մէջ:

Այսպէս որեմն հացկառակներու բոլոր ճիգերը մնացին անհետեւանք. իսկ Դաշնակցութիւնը առանց վատելու - հաստատ քաղց յեղափոխական ճամբով եւ տեսաւ այնքան գործեր, որոնց մէկ քաղաքը չէր գործուեր եւ թէ միութիւն կայանար, հնչակեան հաստատներու միութիւնը ու քանդումը կը հաստատէ առիկա:

Դաշնակցութիւնը շատ իրաւացի կերպով զգոյշ վերաբերուած էր գէպի վերակազմակերպութիւնը եւ ստիկա հաստատեցին Ամերկայի հին հնչակեան նահանգային վարչութեան ներքին շրջաբերականը, եւ սեր. Հայաստանի մէջ իբր սօքիման հրատարակուած կ. Փափազեանի Լոնտոնի կեդրոնի զրկած նամակները, վարկարեկել զաշնակցական գործիչները, ջլատել Դաշնակցութեան ոյժը, այս եղած է վեր. հնչակեաններու միակ փափազը. հնչակեան գրաւոր փաստերը այդպէս կը խօսին:

Եւ ինչու վերակազմակերպութիւն անպատճառ միութեան հարցը կապել Դաշնակցութեան հետ. 96-97-98 թուականներուն գոյութիւն ունէին արմենական խումբեր արտասահմանի մէջ, նոյնպէս հին հնչակեան կուսակցութիւնը, ինչու չի

փորձելին ուրիշ միտնալ անոնց հետ միութեան սիրահարները . այս բոլոր արդէն կը բաւեն վերակազմեալ միութեանականներու սեւ հոգիները խոն քերելու , նաև անոնց միութեան տակ սքողուած ոճրագործ դաւաճանութիւնները :

Մենք պիտի աշխատինք փաստելու թէ , յետ կուսակցութիւնները միացնելու համար ճիգեր երբէք պէտք չեն եղած . համարումի , գործելու միատեսակ մտածման եւ ընկերներու փոխադարձ վստահութեան պարագային մէջ ինքնաբերաբար կը գոյանայ միութիւն :

Վանա արիւնհանգ կոռուշն մէջ ինքնաբերաբար միացան հնչակեան , Արմենական խումբերը դաշնակցական կոռուշ խումբերուն—իսկ եթէ անկէ ի վեր չեն կրկնուեր նոյնանման դէպքեր , յանցանքը Դաշնակցութեան չէ որ Միւնիւն կը գործէ երկրին մէջ , Այսպէս եղաւ նաև անցեալ ամառուան մակեղանական ազգամարտութեան ժամանակ . երեք տարբեր կուսակցութեան կոռուշ խումբեր միասին տարին կոռուշ խումբու դէմ , սեղմելով իրենց շարքերը : Կրցանք հասկցնել օրինակ թէ յետ կուսակցութիւններ միացնելու համար ոչ արաքին եւ ոչ ալ ներքին ճիգերու պէտք չի գոյացուիր . գործի պարագային , միութիւնը կը գոյանայ ինքնին . իսկ հակախղճութեան տարբեր , կամ կուսակցութիւն մը յետ կազմակերպութեան հետ միացնելու համար գործ գրուած բոլոր ճիգերը աննտեսանք կը մնան ու պիտի մնան մանաւանդ հիմակ , որ շատ փոխուած է արտասահմանի հայուն մտածումները դէպի այս կարգի խնդիրները . վերջացած է այլեւս ՅԾԻՆ ստեղծուած հակախղճութեան հոսանքը , «միութիւն» բնուածը կա տարուած է հնչակեան հաստատանքու մէջ եւ ամենապարտաւոր կերպով վերջացած է իսկ այժմ երբ ժամանակը , ու ժողովուրդի արամագրութիւնները փոխուած են , ինչպէս իսկ երեւակը շատ անգոր , անկարող պէտք է գոյ ինքզինք նոր հոսանք ստեղծելու այս պայմաններու մէջ :

Արտասահմանի մաքուր յեղսփոխական տարրերու մէջ միութեան հաւանականութեան պարագային իսկ երկար սահմաններ պէտք են գոյն գըլուսի հանելու համար :

Իսկ այժմ Պ. Սուշուրեաններ , ժամանակը շատ սուղ է . շատ հաւանական կը թուի յոռաջիկայ գոյնան մակեղանական ապստամբութեան վերականգնումը . պարաստումինք հայերս ալ լըծօրէն , իրերեւ աւելի անդ փոթորիկ մը փրթի Հայաստանի լեռներու կատարներէն :

Միութեան վրայ ճառելի աւելի , ձեռք տանք հայաստանցի , զոնէ զէնք եւ զեկաւարող ուժեր հասցրենք հոն եւ այսպիսով միայն մեր պարագայնութիւնը կատարած կըլլանք :

Անցեալները մերս Արմէնիայի մէջ հրատարակուած Պօրիս Մարտիօ վի հայերուս ուղղած կոչին ծանօթ ենք ամենքս ալ , ան ոգեւորեց ու մէնքս ու ազդեց նոյնիսկ մեր շեղքներուն վրայ : Նոյնիսկ Վ. Կոնյայի իրերթ կոչուող փոխադր զայն արտասուցեց , թէեւ հրատարակօրէն գողնալով նամակին առջին հատուածը , որ կը վերաբերէր դաշնակցական ընկերներուն : Սյգ փալաք թող ծածկէ ճշմարտութիւնը , սերիւնչ հոգը . բայց ինչպէս Սարաֆով , նոյն

պէս ալ ամէն տողով մտածող մարդ գիտէ թէ Հայաստանի մէջ գործող կուսակցութիւնը Հ. Յ. Դաշնակցութիւնն է . եւ անոր համար է , որ հայ անձնուէր , մաքուր եւ զոհող տարրերը հաւաքուած են այսօր Դաշնակցութեան շուրջը , որ կը թափեն անոնք իրենց ջանքերը , որոնք արգիւնաւոր են եւ արգասաբեր : Ան ճշմարիտ գործ . կենալ եւ միութիւն պտալը գտարկապորտի վայելք ունեն եւ ուրեմն զուր ճիգեր :

Ֆիլիպ

ՃԵՍԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՅԱՂԹԱՆԱԿԷ

(Շար նախորդ թիւէն եւ վերջ)

Ա. Տ կրտ . — «Ինչո՞ւմ զանախն գիր» կամ «անարժան» դարձաւ ներկայ տեսուչը(») Ռ. Ս. որ առանց խղճաւորութեամբ այդպիսի անպատկառ բառ էք գործածուած դէպի մի անձնուէրութիւն , որի հասարակա. կան եւ անդուս եւ անարատ գործունէութիւնը պարտանք է հայութեան համար :

Նախ գրածներուս իմաստը լաւ հասկացէք եւ յետոյ մասնաւորեցէք մէկ անձի վրայ , այն անպատկառը , որոնք կը պատկանին խումբին անգամ երէն այսինչին կամ այնինչին եւ ոչ թէ միահամուռ մէկ անձին :

Չեղ ըսեմ թէ ինչո՞ւ համար Ռ. Ս. շահախնդիր դարձաւ : Ելմիմոնայ 1600 անակիք առթիւ տրուած հացկերոյթին մէջ Ռ. Ս. անպատկառ խոսքեր արտասանելուն եւ բաժակա. կոռու պատճառ դատաւարուն համար Նղիշէի նկատողութեան ենթարկուեցաւ եւ երկուքին մէջ խուլ հակասութիւններ մը սկսաւ , այնպէս , որ Ռ. Ս. սուսնորդարան ոտք շը կոխեց , իսկ միւս կողմէ Նղիշէն , մեր աղատամիտ(») Նղիշէն , այդ դէպքը գրեւոր վեճ . կաթողիկոսին , խնդրեց , որ Ռ. Ս. ը բանադրէ եւ արտաքսէ եկեղեցիէն կաթողիկոսական կոնգրատիւ(») Արդ , այս դէպքում , ո՞ր անշահախնդիր մարդը կը ընդունէր Նղիշէի հրաւերը ձեռուչ նշանակուելու մասին , եթէ այդ մեծ նախատինքը իրեն ուղղուած լինէր : Ռ. Ս. զլիսով ու ոտքով մէջ մտաւ եւ Նղիշէի ձեռքէն ընդունեց այդ պաշտօնը . Ռ. Ս. ի սյգ վարժուածը շահախնդրութեան բացարձակ ապագոյց մըն էր , եթէ չըսենք ստորոտութիւն : Ռ. Ս. եթէ անշահախնդիր մէկը լինէր , պէտք է թքէր Նղիշէի առաջարկին վրայ . եւ փոխադարձաբար , եթէ Նղիշէն ազնիւ մարդ լինէր , այդ հաւատաքնական պարագային արարքը անամօթաբար գործելէ յետոյ , շէր հրաւիրէր Ռ. Ս. ին Կորիւն վարդապետը իմ ներկայութեան Նղիշէի երեսին տուաւ անոր այս կեղտոտ վարժուածը , իրուացի կերպով հարց տարով—Ի՞նչ , Նղիշէ , ի՞նչպէս համարձակեցաք Ռ. Ս. ին անտուչ նշանակել , որուն եկեղեցիէն արտաքսուածը եւ բանադրութիւնը խնդրած էիք պաշտօնական գրութեամբ վեհափառէն :

Նղիշէի այս արարքը զուր լինչով կարողացանք , առաջի եւ վերջի վարժուածները իրարու հետ ի՞նչպէք կը հաշտեցնէք . նոյնպէս Ռ. Ս. ի նոյնանման հանգամանքներում ունեցած վարժուածը :

Այս գէպը փաստ է , Նղիշէն այն շէր , ի՞նչ որ ցոյց տալ կուզէր եւ կամ այնպէս էինք կարծել , եւ կամ տակաւին դուք կը կարծէք , հայ հասարակութեան ցոյց տալով , որ Նղիշէն մեր ցանկացած ու չը գտած միակ արժանաւոր կղերականն է :

Ես ոչ թէ միայն սրաց նամակովս բաւականացայ , այլեւ քաջութիւն ունեցայ ճիգովս այդ միարարութեան եւ գիտնապետի ներկայութեանը Նղիշէի կրեւին տալ իր ետական , ինքիկան , վաստակար գործերը եւ անհրաժեշտ փաստերով ապացուցանել իր վաստակը ուղղութիւնը եւ անտակտ վարժուածը :

Այս երես երեսի պաշտօնական բացատրութիւնը Նղիշէի գառապարտութեան վճիռը եղաւ եւ ձողովորդի բողոքի ձայնն ալ վրայ հասնելով , որդուեցաւ Նղիշէն պաշտօնակա ընել :

Այս վերջին փաստ : Եթէ սզիւ լինիք , քաջութիւն կուենաք համարձակ եւ ուղղակի ձեր հակառակորդին աչքերուն մէջ նայելու . եւ եթէ այդ քաջութիւնը ունենաք «Շարժում» մէջ գրած : Երուս կէտ առ կէտ , սող առ սող կը պատասխանէք , եւ նոյն իսկ եթէ կարող էք , փաստերով կը ճերքէք . ինչպէս ես բրած եմ . ինչպէս ըրի եւ ինչպէս պիտի ընեմ , եւ ոչ թէ հոյհոյութիւններով . փաստերու դէմ փաստ է հարկաւոր , հայտնութիւնը , ստաստութիւնը փաստ չէ :

Իսոյց ի գուր կը փնտռեմ շիտակութիւն եւ աղնութիւն այնտեղ , որտեղ գոյութիւն ունի միայն անարգ հացի խնդիրը եւ կուսակցա. մոլութիւնը . ձեզ նման պրպարտիչ եւ հոյհոյող գրիչներ երբէք արդիւք չեն կարող հանդիսանալ իմ գործունէութեան եւ իմ գրած ճշմարտութիւններու ոյժը եւ ազդեցութիւնը 1 առ 100 նուազեցնել լսել :

Իսոյ նամակս իր նպատակին հասած է , ճշմարտութիւնը յաղթանակած է , ի գործ է ձեր աստմ կրճըսելը :

Ճշմարտութիւնը խիստ է , այլ ճշմարտութիւնն է :

Իսկ Կ. Փաշուխան—խաճ

ԹԵՂԵԱԿՑՈՒԹԻՒՆ

Ֆիլիպ 4 Փետրվար 1904

Հայրենիքի վերջին թուին մէջ Պ. Ա. Տ. ի նախաջողածը կարգացած ատենս , որուն մէջ յօդուածագիրը շատ ճշգրիտ կերպով վեր կը հանէ գորդացած եւ գիտակից հայ երիտասարդութեան պարագայնութիւնները ըլգհանուր ազգի ներկայ ձգնաժամային գրութեան հանդէպ , չեմ կրնոր պահ մը շանդրադառնալ մեր միջավայրին վրայ եւ գոհունակութեամբ(») կր նրկատեսի որ մեր գարգացեալ համարող երիտասարդութիւնն ալ անգործ չի մնար ներկայիս մէջ : Շարաթը մը ի վեր ժողովներ կը գումարուին , ծրագրիներ կը մշակուին , ընկերութիւն մը կազմուիլու համար . եւ գիտեք ի՞նչ ընկերութիւն . շկայծուի թէ գրադարանի , ուսումնարանի կամ այլ հասարակային հիմնարկութիւններու նպատակու նպատակաւ , ինչ որ ժամանակի պահանջներուն անհամապատասխան հետաքար եւ անպատակայարմար կը գտնուի Հայրենիքի յարգոյ աշխատակիցը , հապա . . . շահասիրական ընկերութեան մը ի՞նչ պիտի ըսէ :

Ոստքս վաճառականական պայտօն . եաներու շրջանակի մասին է , որոնցմէ աւելի հեղինակաւորներէն մի քանի հոգի գաղափարը յղացած են հայ պաշտօնեաներու խնայողական-հակահական ընկերութիւն մը կազմելու եւ ք. շ ժամանակի մէջ իրենց շուրջը հաւաքելով յիսուենի շափ համարներ մեծ եռանդով ձեռնարկած են ճրագրի մշակման թերեւս առաջին անգամն է որ միջկի մէջ յիսուեն հոգի համարներ գործի մը շուրջը կը բոլորուին , այն ալ շահագրգիռան նպատակաւ :

Ասով չեմ ուզիր պարտաւել կամ անոյուս հաշակել այդ պարտներու ձեռնարկը , այլ ընդհանրապէս շատ գործնական կը գտնամ , պիտալով մտնաւանդ որ այդ նպատակին պիտի գործածուին զլիսաորաբար պիտարտի կամ ուրիշ անպատակ ծախքերու յատկացող գումարներու մէջ մասը , միայն կուզի այս առթիւ համասարար իրենց յարգելի պաշտօնակիրներուս , որ իրենց անձնական հաշիւներէն դուրս , անմիջական պարագայնութիւններ ունին կատարելու ազգային պատասգութեան գործին մէջ եւ անկեղծօրէն կոչուած ընել իրենց զուր ժամանակն ու միջոցները , զոնէ մէկ մասն ալ յատկացնեն այդ պարտականութիւններու կատարմանը , իմէ շին ուզեր ապագայ աստմութեան մէջ իրենց բաժին ունենալ անտարբերութեան սիտուր . անտարբերութիւն մը որ դաւաճանութեան շափ ստոր ե պատասպարտելի է ներկայ պայմաններու մէջ :

Երուսնց

19 Յունվար 1904 թաւր. 4

(Շար. նախորդ թիւէն եւ վերջ)

Մերոյ վ-ի մասին յետոյ կը գըրեմ . Այժմ դառնաք բուն խղճիւն . ինչպէս ընթերցող անտաւ ըլլուրովն օրին ըսան կը սթաւրիգի լաւարանական ընկերութիւնը , ուրիշ ըսան է Պ-ի գրած ընտանական փոքրիկ դասախօսութիւնները :

Այժմ տեսնեք , թէ դրսեցիների հետանալուց յետոյ ինչ գործ է չինել թաւրիգի երիտասարդութիւնը :

Ճիշտ է մի կարծ ժամանակ կիլաւալի երիտասարդութիւնը կենդանութեան նշաններ ցոյց տուց : Այդ մ գ ծանօթ լիմսիգաներով կիլաւալի ուսուցչական խմբին հետացնելուց յետոյ էր . բայց երբ ժողովրդի հոգեւոր հայրը միացած իր քարնկաններով այդ երիտասարդներին մի քիչ փարրաշով եւ տուգանքներով ապտուալիք կարգացին , ամեն բան վերջացաւ : Այսօր , որ յունվար ամիսն է , փակ է կիլաւալի երկուսու զպրոցները փակ կը մտնաւ եւ միւս բոլոր ամիսներ ի իւնը . որ մի կողմէ էր իւլ պատիւ ու խիղճ ամենայն աներեսութեամբ վճուել է շրթաբորիլ — իրայնել իր հտքի սալին , այսինքն երբ քաւրի փակ թողնել դպրոցը . . .

Իսկ ի՞նչ է անուժ մեր այդպէս ասած «սթաւր» , ուշքի եկած» երիտասարդութիւնը , ինչու նա լոնէ է , ինչու չի կուտու տյլուս , ծայր չէ հանուած . վախեցա՞ւ մի քիչ սեղմու մից . . . թէ զպրոցի փակման մէջ գտաւ իր յաղթութիւնը . . .

«Մարիգի լաւարանական» ընկերութիւնը փակ միաց . մեծ զոհողութիւն

չկր հարկու որ այն բանալու վեր-
սկսելու համար պէտք էր միայն որ
առաջնորդարանից երկու տող յայ-
տարարութիւնով ժողովի հրաւիրուէր
հասարակութիւնը. առաջնորդական
ժողովանոցը չէ բարեհաճում այդ անկի
որովհետեւ...

Որ երկուստարգը, կրկնում եմ այդ
«Սխախտած ուղիքի եկած» երկուս-
տարգներ, ո՛ւր էք, ո՛ւր քանն էք
մտել ինչո՞ւ չէք հետաքրքրուում:
Դրանք հարցեր են, շատ ու քիչ գի-
տակցող երկուստարգի սիրան ու հո-
գին մաշող հարցեր, որոնց վրայ մը-
տածելն ու հիք մը գտնելը ձեր պար-
տականութիւնն է սուղիքի եկած սխա-
խտութեան հարցը...

Նախկինը էր, որ մենք մի քիչ հե-
ռուստեւ լինէինք. դիտելիք մեր շուր-
ջը, գործ կրստահիլնի՞. գետը չհասած
պէտք չէ հանել:
Պատիկ մարդիկ միայն պղտիկ բա-
նով են ուրախանում:
Ոչինչ չարած, մենք մեր գլուխը
չի գովինք:

Ոսկան Ս.

Սալմաստ Կոյմ. 28ին

Նախորդ նամակովս ցոյց էի
տուել կրթական գործի բաւակա-
նաչափ միջնակարգ դրութիւնը
Սալմաստում:

Այդ յառաջագիծութիւնը կը
պարտինք Հ. Յ. Գաշնակցութեան
Ս. օր Սալմաստի ժողովորդը
Գաշնակցութիւնը պաշտում է և
անոր վարած է հոգով ու սրտով:

Փայտաշինի ուսումնարանը ա-
բող 4.5 տարի փակ մնալուց յե-
տոյ, այս տարի Գաշնակցութեան
ներկայացուցչի շնորհիւ բազուե-
ցաւ: Գաշնակցական ուսուցիչներ
աշխատում են դպրոցում, այն-
պէս որ Փայտաշինի մարզի Սալ-
մաստում առաջին տեղն է բռնում
իր կարգ ու կանոնով: Երկու տե-
սակ բարուքանդ ուսումնարաննե-
րից ուրիշներն էլ են բացուած
դաշնակցական ընկերներէ ջան-

քերով:
Սալմաստում այժմ թուով 15/9
մինչև 16ի չափ ուսուցիչ և ու-
սուցչուհիներ կան, որոնք իրա-
րից չէզոքացած ամէն մէկը իրեն
ուղղութեան և տակտիկայի հա-
մաձայն է գործում առանց իմա-
նալու թէ արդեօք, իր ընկերը,
պաշտօնակիցը միւս գիտում, ինչ
տեսակ է առաջնորդում, մի իւս-
քով մի գիտում աւանդած դասե-
րը, մեթոդիկան և թէ նոյն
դպրոցում տիրող ընդհ. դիսցիպ-
լինան եւայլն, որոնց փոխարէն
գուք կը գտնէք մի տեղում բոլոր-
ովին առաջին հակառակը, թող
ինչքան ուզում է վերջինիս բռն-
նած ուղղութիւնը լինի չափից
դուրս հակամակալարժական,
միայն թէ իրեն ետ առաջ զը-
նայ:

Այդ քառասուն դրութիւնից ա-
չատելու համար և նոյնիսկ մի
քանի քիթերը ցից պահող Պա-
րոնների ոտնձգութիւննե-
րին չափ ու սահման դնե-
լու համար հարկաւոր էր մի ընդ-
հանուր կապ հաստատել Սալմաս-
տում պաշտօն վարող ուսուցիչ-
ների մէջ և ժողով կազմելով խո-
սիլ դպրոցական խնդիրների մա-
սին ու դալման գտնել մեր այդ-
ներքին քայքայիչ դրութեանը:

Այդ բանը շատ լաւ նկատի ու-
նենալով Պ. Ե. Պրանգեանը, ու-
ղարկել էր մի բաց նամակ ու-
սուցիչներին, որի մէջ յարգելի
պարունը ուսուցչական կոչման և
մանկավարժական պահանջների
վրայ հրահանգներ էր տալիս:
Շօշափուած էր նաեւ ընդհ. տե-

սուչ կարգելու հարց: Ուսու-
ցիչները Կոյմ. 28ին հաւաք-
ուեցան Փայտաշինի գիւղը, որ տեղ
լինելու էր ուսուցչական ժողովի
առաջին նիստը:

Որոշուած օրը արդէն ուսու-
ցիչներին մեծամասնութիւնը ներ-
կայ էր: Բացակայել էին միայն
այն Պարոնները, որոնց սրտին
կարող եմ ասել ցաւեր պատճառել
այդ անպատեւի քայլը: Ժողովի
նախագահը Պ. Ե. Պրանգեան
խօսեց աղբու մի ճառ, կրկին ան-
գամ բացատրելով իւր նամակի
միտքը — ուսուցիչների պարտա-
կանութիւնները դէպի մատաղ
սերունդը:

Ժողովի առաջին նիստը եղաւ
տեսուչ ընտրելու խնդիրը: Չայ-
ների մեծամասնութեամբ ընտ-
րուեց Պ. Ե. Պրանգեանը գաւա-
ռական տեսուչ: Ժողովին ներ-
կայ էր և մի կողմուցի տիկին,
որը վարժուհեութեան պաշտօնով
գնում էր Ուրմիի գիւղերից մէ-
կում պաշտօն վարելու: Կրա ու-
րախութեան չափ ու սահման չը
կարծողով փակուելու ժամանակ
խօսեց մի քանի խրատական
խօսքեր և սպա բարեմաղթու-
թիւն անելով հեռացաւ, յոյս ու-
նենալով, որ Ուրմի գաւառի ու-
սուցիչները նոյնպէս կարող են
օրինակ վերցնել Սալմաստի ու-
սուցիչներից:

Չմոռնամ ասելու, որ ներկայ
եղող ուսուցիչներից մէկը դի-
տաւորեալ միտքով եկել էր, խա-
փանելու այդ գործը, բայց ընդ-
հանուր կողմից երրորդ կողմ պա-
տասխաններ տացաւ ստիպուե-

ՍԹՆՅԱՂԻՆ

(Պատմութիւն)

Անճիւն Չեխով

ԹՆՆԱՍԻՆԵՐԸ

Թճվիլը կնիւջ մօտ կանգնած մնաց,
ձեռքերը պարփառին գրգռանքը գը-
րած խոնարհութեամբ գլխով հայեացքը
ուղղած դժբախտ վրայ Թճվիլի գէմբը
անտարբեր արտայայտութիւն էր ստա-
ցել, միայն մօտ քիչ վրայ փոյն ող-
կաթիւն էր կը հակոցուէր, որ ան
քիչ մը առաջ լացած էր:

Այն քիչ քիչ ստիպուի, որ մարդ
կ'զգայ, երբ մահուան մասին կը խօ-
սի, այն ննջասենեակին մէջ չկար:
Ընդհանուր քարացուի մօտ գիւղի
թճվիլի անտարբեր գլխով մէջ տեսակ
մը քայլողական սրտաշարժ բան կար,
այն քիչ քիչ ըրանելի մարդկային
վարի գեղեցկութիւնը, գոր դիւրին
է ընտանիք ու նկարագրելը և գոր
կ'աթիւն թիւնը միայն արտայայտել
կրնայ: Նոյն գեղեցկութիւնը կ'օր
նաեւ այս թախմայի լուսութեան մէջ:
Փերիւլը և իր կիներ լուի կին, չէին
լար, որոտասի ցտէն գատ սկսեր

էին գիտակցիլ իրենց սխտը վիճակի
մասին, ինչպէս որ ստեղծք իրենց
մանկութեան էր անհետացել, այժմ
ու ընդ միջոտ կանոնաւոր գաւառիներ
ունենալու իրաւունքը: Թճվիլը այժմ
44 տարեկան է, բայց արդէն սպիտա-
կեր է և ձեռքերի մը տեսքը ունի,
իսկ իր թառամած և հլուաղ կիներ
35 տարեկան է: Անտրէյը ոչ թէ ի-
րենց տնտեսիկ գաւառին էր միտն,
ապա և վերջինը, Թճվիլը հակառակ
իր կնիւջը կը պատկանէր այն բնառ-
ութիւններուն, որոնք հոգեկան
տանջանքի մը պահուն շարժուելու կա-
րիքը կ'զգայ:

Մտաւորապէս հինգ վայրկեան իր
կնիւջ մօտ կ'նստէր յետոյ, աջ սրուն-
գը աւելի բարձրացնելով ննջասենեա-
կէն փոքրիկ սենեակը գնաց, որու
կէտը մեծ ու լայն բազմոցով մը բռն-
նուած էր, տնի տեղէն ալ խոհանոց
գնաց, վառարանի և խոհաբարուհու
անկողնի առջեւէն անցնելով ծոկով
փոքրիկ դռնէն մտաւ նախասենեակը:
Այստեղ նորէն աչքից գորկաւ ձեռ-
մակ գլխարկն ու սփողոյն գէմբը:

— Վերջապէս — ըսաւ Ապօկին հա-
ռաչելով, և բռնելով գոնահարը — կը
խնդրեմ, երթանք: — ժիչկն ինք-
ն իրեն հաւաքեց, նայեց անոր և մը-
տ բերեց...

— Ահեցէ՛ք ես ձեզ արդէն ըսի,
որ ինձ անկարելի է ձեզ հետ գալ —
ըսաւ բարկացած:

— Պարոն Թճվիլ ես յիմար չեմ,
ձեր դրութիւնը կատարելապէս կը
հասկնամ... կ'ըսեմ ձեր տրամա-
դրութիւնը — ըսաւ Ապօկին աղաչա-
կան ձայնով: Ընտրեց որ իմարիկին տա-
նելով — ըսաւ չէ: Եր ինձ համար
չեմ խնդրեմ... կ'ըսեմ կը մեռնի, եթէ
գուք այն աղաղակը չէք ու այն
ղէմը տեսնէք ինձ պիտի հասկնա-
լիք և կամքս կատարէք: Սաստուծ
իմ, կը կարծելի թէ հագուելու էիք
գացած, Թճվիլ ժամանակը թանկ է:
Խնդրեմ, երթանք:

Անկարելի է որ ձեզի հետ գամ —
ըսաւ Թիբիլովը և զէպի սրահը քա-
լեց:

Մանր վիշտ մը կը կրէր, կը
հասկնամ, բայց ձեզ չեմ ստիպեր ա-
ռայց ցաւ մը բժշկել կամ ուրիշ որ
է բժշկական գործ մը կատարել,
այլ մտորկային կեանք մը փրկել,
կեանքը անձնական ամէն ցաւէ բարձր
է: Ձեզ' է քաջարտութիւն մը, հե-
րուսութիւն մը կը խնդրեմ, Յանուն
մարդասիրութեան:

— Մարդասիրութիւնը — ըսաւ
Թիբիլովը զայրացած, թիչկն առն
բան երկու կողմ ունի: Նոյն այդ
մարդասիրութեան անունով ես ձեզ
կը խնդրեմ զիս հոս հանգիստ ձգել:
Եւ Աստուած վկայ, շատ գարմանալի

էք: Ոտքի վրայ հազիւ թէ կրնամ
լինքինքս պահել, դուք զիս կը վախ-
ցնէք մարդասիրութեան զգացումով:
Այժմ վայրկեանիս ամէն բանի անըն-
դունակ եմ... ոչ մի գնով չեմ գար,
և ինչպէս կրնամ կրնա միայնակ ձգել:
Ո՛չ, ո՛չ... Թիբիլովը ձեռքով մերժ-
ման ձեւեր ընելով քայլ մը յետ գը-
նաց:

— Եւ... և մի' խնդրե՛ք — սար-
սափած սկեց շարունակել: — Ենտր-
ութիւն կը խնդրեմ... օրինազբի
սասնեքերուրդ զիսի համաձայն ես
պարտաւոր եմ ձեզի հետ գալ, գուք
իրաւունք ունիք օձիքէս բռնելով
քարշ տալ ու տանիլ ձեզի հետ... կը
խնդրեմ, քարշ տուէք զիս, սակայն
... անզգայացած եմ... խօսելու ան-
գամ անկարող եմ... ներքեւ... —

— Անարգայ է, Թճվիլ ինձ հետ
այդ սօնով խօսիլ — ըսաւ Ապօկինը
Թճվիլի թեւ նորէն բռնելով: — Տա-
նեքերուրդ զիսի մասին բնա խօսք
չի կրնար ըլլալ: Ձեզ ստիպելու բոլոր-
ովին իրաւունք ունիմ: Եթէ կու-
զէք գալ, եկէ՛ք, եթէ չէք ուզեր,
այդ ձեր գործն է, և ես ձեր կամ-
քին չէ որ գիմում կրնեմ, այլ ձեր
զգացումին: Մահկամարդ կին մը կը
մեռնի, կըսէք թէ ձեր գաւազը քիչ
առաջ է մեռեր, ձեզդ ուրիշ ո՛վ ա-
ւելի կրնայ իմ ցաւս հասկնալ:

(Շարունակելի)

ցաւ լռել :
Ժողովը փակելուց և Պ. Ս. Ֆրանգեանի ձեռքը պինդ կերպով սեղմելուց յետոյ հեռացանք զո՛հ սրտով, սպասելով երկրորդ ժողովին, որը կայանալու է զեկ. Զին Հաֆթլուան գիւղում :
Մարդ այս օգտակար գործերից ետքը կարող է հարց տալ Ելիշէ վարդապետին, ո՞ր է քո «կենարօնական»ը, ուր են քո խոստումները :

Ազատ-Ունկնդիր

Յարգելի խմբագրութիւն «Շարժում» ազգայնական լրագրոյ

Ներկայիս պարտք կըզգանք յայտարարել, որ ժողովուրդը չը խաբուի Տէր Յակոբ քհն. Տէր Յակոբեանէ, որովհետեւ ան զիստակար մարդ մըն է և օտարներու մէջ ունեցած է անվայել վարմունք : Այս ինկատի ունենալով մենք ստիպուած եղանք զանի քաղաքէս հեռացնել՝ տալով անոր ճանապարհածախս : 3 ամսուան ծառայութեան համար 500 ֆր. առնելէ ետք ան նորէն չէ դադարած հոս հոն մտնալ և ազգ. արժանապատուութիւնը վիրաւորել : Կը յրաւիրենք ժողովուրդը ինչու կենալ այդ քահանայէն :

Ի դիմաց ինքնաբերական Պ. Լուսաւորիչ եկեղեցւոյ Սուրբ-Նայի :

Ատենադպր Ատենապետ
Կարապետ Առաքել Խոսիկ Ս. Էֆ
(Կնիք) Վեֆանան

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Պատրիարք Օրմանեան Յարին նոր խնդրագիր մը զրկած է, որոնք մէջ յայտնած է թէ եկեղեցւոցական կալուածներու գրաւումով Յարը կը պիտի կըլայ Երևոյ չի բուն իրաւունց և խնդրած է օրէնքի գործադրութիւնը ետ ձգել, յայտնած է նաեւ թէ կաթողիկոսական աթոռը հայ ազգը կը բողոքէ փոխադրելու յայտնուածը :

— Էրնի (Վանքիկ) մէջ տեղի ունեցած յեղափոխական ժողովի մը մէջ ինքնաստ Հ. Յ. Կ. շնակցութեան մէկ անդամէն հանքանակուած է 5500 ֆր. :

— Թուրքայէն մեկ կը գրեն, որ դաշնակցական ընկերոջ մը ներկայութիւնը առիթ տուած է հոն բանալ հանքանակութիւն մը, որու արգիւնքը եղած է 100 ֆր. Հանքանակութեան սիրով մասնակցած են նաեւ տիկիներն :

— Սօֆիայէն մեկ կը գրեն, «Ներկուան թմրած Սօֆիան այսօր զարթնումի նշաններ ցոյց կուտայ : Հիմա ունինք ընթերցասիրաց, ազգատախնամ ընկերութիւններ, ունինք նաեւ զերաստնական խումբ մը, որ մտերմ

ի նպատակ վարժարանին պիտի ներկայացնէ «Վասպուրականի հերոսները» Խուճիկն պիտի աջակցին նաեւ «Վանքի թէսի հայ անդամները» Յուսով եւ ք հասարակութիւնը կը քաջալերէ այս գեղեցիկ ձեռնարկը :
— Սիւրիստէէն մեկ կը գրեն, որ վարժարանի սրտահին մէջ հանդիսաւոր կերպով ատուած է վարդանանց հանդէսը : Եղած են ատենախօսութիւններ : Կը գրեն նոյնպէս, որ Սիւրիստէի հայերը վարժարանին մէջ ունեցած են շինիչ երեկոյթ մը, որու մէջ երգուած են ազգային երգեր և եղած են արտասանութիւններ :

— Կ. Պոլսոյ ազգ. հրահանուցի շինութիւնները ընդարձակելու համար երկու անձերու կողմէ եղած է 80,000 ֆր. նուէր մը :
Նուիրատուները վաճառական անձինք եղած են : Թող քննան Պուրկարահայ վաճառականները : Երբ ասդին մեր դպրոցները ուղորմիչի դրութեան մէջ են և սերունդները տգիտութեան մէջ կը փճանան :

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Քաղաքային ընտրութեանց առթիւ Սօֆիայի մէջ քանի մը տեղ պատահեր են խառնութիւններ : Մէկը վիրաւորուէր է, ուրիշներ ծեծկուելի են :

Կառավարակոյնները շահած են 2970 ձայն, ընդգրկուողները 887 ձայն :

— Իւշ Բունարի մէջ մակեդոնացի հայդուկ մը վեճի բռնուելով սպաննած է իր ընկերը :

— Պուրկարիս որոշած է թէ քաղաքական սահմանը նոր գործով ամրացնել :

— Սլաւական ազգերը Ռուսիոյ համար կը շարունակեն ընել համակրական ցոյցեր :

Կառավարութեան և Սիւնոյի հրամանին համեմատ անցեալները Պուրկարիոյ եկեղեցիներուն մէջ ուսուցանողներուն յաջողութեան համար կատարուեցան աղօթքներ : Բայց ամէն առողջ խորհուրդ մարդ բարեկարգ է գիտնալու, թէ աղօթքներ չեն, որ կը վճռեն պատերազմի մը ելքը : Քիստէ՛տալի մէջ պուրկար երբ տասարդներ կամաւորներու խումբ մը կազմած են ուսուցանակին մէջ մտնելու և պատերազմի վայրը երթալու համար : Եղած են դիմումներ, բայց ուսուցանողները թիւներ իմացուցած է, որ ինք կամաւորներու պէտք չունի :

— Պ. Բոշթա՞ կիմանայ, որ Ռուսչուքի մէջ ձերբակալուած է Սաղիճեան անուն հայ մը, որը կը փնտառուի եղբոր անդրիական կառավարութեանէն և կը կարծուի թէ այս մարդը եղած է Լոնսօնի մէջ երկու հայեր սպաննողը :

Երկու հայեր սպաննողը անձնասպան եղաւ : Եթէ ճիշդ է, այդ պիտի ըլլայ ի Սաղուճի սպաննողը : Լ. Էրը կը կարօտի ստուգութեան :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՌՈՒՍ—ՃԱՐՈՆԱԿՈՒՆ,
ՊՍՏԵՐԱԶՄ

Կուտի վայրէն ստեղծ տեղեկութիւններ չկան : Կըսուի թէ ձաբոնիա Բօրթ-Արթուրը պաշարելով զանի գրաւելու ծրագիրը ունի, բայց այդ նպատակով շարժումներ չեն նկատուիր ճարտանքիներու կողմէ :

Ռուսիա կուզէ սիպերական րանակ մը ևս կազմել :

Կըսուի թէ Լեւստօրֆ շնորհալուր կը եղած է և Սարին մօտ շընդունուիր :

— Պայքարի (Սիպերիա) լիճին մօտ շոգեկառք մը գիծէն դուրս ելած է : Կան շատ մը վիրաւորուածներ և մէկ հոգի մեռած է :

— Բօրթ-Արթուրը պաշտպանելու համար Ալէքսիէյ կառավարութեան հաշուով կազմած է կամաւորներու գունտ մը :

— Ըստ երկուսի Ռուսիա Քարպիտի մէջ կեդրոնացնել կուզէ իր ոյժը : Այս քաղաքի մօտերը երեւցած են ճարտանական աւազակներ՝ որոնք որոշած են երկաթուղիի գիծը օգը հանել բայց ուսանելու կողմէ հալածուած են :

— Ռուսիոյ մէջ սկսած են Անգլիոյ և Էմբրիկայի վրայ կատակածանքով նայիլ :

— Կառավարիոյ Քլաուդրնայուրկ քաղաքի ուսանողները Վ. Է. Էնայի ճարտանական դեպանին ուսուած են համակրական հեռագիր մը :

— Մայրաքոյն Արեւելքի մէջ գտնուող անգլիական տորմիզը կը բաղկանայ 49 զանազան տեսակի պատերազմական նաւերէ :

— Ճարտանական և Ռուսական փոքրիկ յատաշարայան գունդերու մէջ ցամաքի վրայ առաջին անգամ ըլլալով տեղի ունեցած է բազմում մը :

— Պատերազմական նախարար Քուրալթիին ցամաքային զօրաց վրայ ընդհ. հրամանատար կարգուած է :

— Կառավարի զստնալով ուստիականական հսկողութեան տակ գտնուող մարդոց արտօնուած է բանակի մէջ մտնել :

— Ճարտնիա գնած է երեք նոր զրահատորներ :

— Յարը ուսական Կարմիր Խաչին նուիրած է 2 միլիոն ռուպլի :

— Պոնթօրմայիոն կը գրէ, որ պատերազմի ծաղիլը մեծ ոգեւորութիւն ու շարժում առաջ բերած չհայերու մէջ մասնաւորապէս և բոլոր հպատակ ժողովուրդներու մէջ ընդհանրապէս չայցերու :

Լեհներու, վրացիներու և ուսուցարգացած ու ազատ խորհող տարրի համակրութիւնը ձաբոնիոյ կողմէն է : Աստեք ամէնը կը ցանկան, որ հսկուն հարուած մը ստանայ, որ իրենք ոտքի կանգնին և Ռուսիոյ գլխին բերեն ֆրանսական 1871 յեղափոխութեան օրերը, որ խորտակուցան ստրուկներու շղթաները :

— Վերջերս Բարիզի ուսական դեպանը Տէլքուէի հետ ունեցած է անսակցութիւններ : Կը կարուէ, որ Ռուսիա կուզէ Ֆրանսայէն 800,000,000 ֆր. իր խոստութիւն մը ընել :

Թ Ա Ւ Ր Ք Ի Ա

Սէլանիկի շրջակայ գիւղերէն թիւրք պաշտօնեաներու կատարած գաղանթեանց դէմ բողոքագիրներ զրկուած են երկու պետութեանց գործակալ Յօն Սիւլէրին և Տէմէրէքին :

— Ըստ երկուսի Ռուսիանցիները կը պատրաստուին ընդհանրապատմութեան մը : Կըսուի թէ անոնք պիտի կարողանան մինչեւ 30,000 մարդ զինել : Պայքարէքէի մօտ տեղի ունեցած է կռիւ մը, որու մէջ վիրաւորուած է թուրք սպայ մը՝ Նէմի փաշա : 60 ալպանացի զերիններ բերուած են Սէլանիկ, որոնք պիտի աքսորուին Ափրիկէ :

Թիւրքերը յարձակած են Վանի նիա գիւղին եկեղեցիին վրայ զայն աւարդած ու կողոպտած են :

— Ֆէհմի փաշայ, Սուլթանի լրտեսը, շնորհալուր կը եղած է :

— Ալպանական շարժումները օր ըստօրէ մեծ ծաւալ կը ստանան : Անոնք կը պահանջեն իրենց արտօնուած պետերուն վերագարձը և կը մերժեն տուրք վճարել :

ՄԱԿԵՂՆԵՆՆԵՐ

Պորիս Սարաֆով Ժընէվ կը գտնուի այժմ :

— Զօրավար Կարիպալտի որոշած է 5000—10,000 իտալացի կամաւորներով Մակեդոնիան անցնել : Զօրավարը սկիզբ առաջ ճանապարհորդութիւն մը ընելով ուսումնասիրեց աստրիական սահմանազիւլի ամրութիւնները : Իտալիա կուզէ այս արշաւանքը քաջալերել և զինուորական պատրաստութիւններ կը տեսնէ :

Երբ Ռուսիան անդին գրաւողուած է Պալքանի մէջ կարող է մեծ փոթորիկ մը բարձրանալ, որովհետեւ Սարաֆով պիտի ուզէ իտալիոյ միջամտութիւնը ամէն կերպով արգիլել :

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ
Печатница, «Взаимность» Вл. 1911